



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական  
դատարանի որոշում

Վարչական գործ թիվ ՎԴ/7491/05/22

Նախագահող դատավոր՝

Դատավորներ՝

Ա. Պողոսյան

Հ. Խաչատրյան

Մ. Մելքումյան

Վարչական գործ թիվ ՎԴ/7491/05/22  
2026թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը  
(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող  
զեկուցող

Հ. ԲԵԴԵՎՅԱՆ  
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ  
Լ. ՀԱԿՈԲՅԱՆ  
Ք. ՄԿՈՅԱՆ

2026 թվականի ապրիլի 15-ին

գրավոր ընթացակարգով քննելով «Լենդբանկ» ՓԲԸ լուծարվող բանկի լուծարային կառավարիչ Հարություն Ղազարյանի (այսուհետ՝ Կառավարիչ) վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 02.05.2025 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Կառավարչի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

### Պ Ա Ր Զ Ե Ց

#### 1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Կառավարիչը պահանջել է պարտավորեցնել Կոմիտեին իր կողմից 07.10.2022 թվականին փոխանցված գումարները, այն է՝ «ա» հերթի աշխատավարձային պահանջների բավարարման արդյունքում լուծարվող բանկի՝ որպես հարկային գործակալի եկամտային հարկի գծով հաշվարկված և հարկ վճարողի միասնական հաշվին փոխանցված հանրագումարային 15.266.625 ՀՀ դրամը, ձևակերպել որպես եկամտային հարկի վճարներ, ըստ ներքո թվարկված ֆիզիկական անձանց և գումարների.

- Ղազարյան Հարությունի հաշվարկված եկամտային հարկը՝ 7.007.319 ՀՀ դրամ,
- Բաղիրյան Ալեքսանդրի հաշվարկված եկամտային հարկը՝ 2.067.825 ՀՀ դրամ,
- Հովհաննիսյան Անդրանիկի հաշվարկված եկամտային հարկը՝ 1.749.735 ՀՀ դրամ,
- Մարկոսյան Պետրոսի հաշվարկված եկամտային հարկը՝ 366.539 ՀՀ դրամ,
- Սահակյան Վարդանի հաշվարկված եկամտային հարկը՝ 1.552.667 ՀՀ դրամ,
- Մանուկյան Ալբերտի հաշվարկված եկամտային հարկը՝ 692.536 ՀՀ դրամ,
- Բադոյան Արմենի հաշվարկված եկամտային հարկը՝ 1.129.644 ՀՀ դրամ,
- Ավետիսյան Մելիքի հաշվարկված եկամտային հարկը՝ 700.360 ՀՀ դրամ:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Ա. Դիլբարյան) (այսուհետ՝ Դատարան)

16.06.2023 թվականի վճռով հայցը բավարարվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.05.2025 թվականի որոշմամբ Կոմիտեի վերաքննիչ բողոքն ամբողջությամբ բավարարվել է՝ Դատարանի 16.06.2023 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանվել և փոփոխվել է՝ հայցն ամբողջությամբ մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կառավարիչը:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

**2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 144-րդ և 146-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը, կիրառել է ՀՀ հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածը, որը չպետք է կիրառեր, չի կիրառել «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ մասը և 31-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանն առանց վարույթի մասնակիցների կողմից որևէ վկայակոչման եզրակացություն է կատարել լուծարային կառավարչի կողմից՝ լուծարվող բանկի սնանկության վարույթի շրջանակներում իր պարտականությունների կատարման վերաբերյալ՝ մասնավորապես արձանագրելով, որ կառավարչի կողմից վարույթի շրջանակներում պարտավորությունների մարման սառեցում (մորատորիում) տեղի չի ունեցել:

Պատասխանողն իր հիմնավորումներով միայն շեշտել է միասնական հաշվին առկա գումարների ինքնաշխատ հաշվեգրման գործոնը և բացառապես օրենսգրքով առաջնորդվելու հանգամանքները և ո՛չ Դատարանում, ո՛չ Վերաքննիչ դատարանում չի վկայակոչել մորատորիումի կիրառված լինել կամ չլինելը, մինչդեռ Վերաքննիչ դատարանն անդրադարձել է նշված հարցին:

Վերաքննիչ դատարանն առանց հաշվի առնելու հայցի առարկան և հիմքը համարել է, որ սույն գործը քննվում է ՀՀ հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածի շրջանակներում: Մինչդեռ հայցվորի կողմից ներկայացված հայցի իրավական հիմքը կազմել են հենց «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները, ինչն օրինաչափ է: Հետևաբար Վերաքննիչ դատարանը, պնդելով, որ գործը քննվում է միայն ՀՀ հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածի շրջանակներում, կոպտորեն հակասել է հայցի առարկային և հիմքին, դուրս է եկել վերաքննության սահմաններից և այդ կերպ կայացրել է չպատճառաբանված և անօրինական որոշում:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.05.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ Դատարանի 16.06.2023 թվականի վճռին:

### **2.1. Վճռաբեկ բողոքի պատասխանի հիմնավորումները.**

Սույն գործով Վերաքննիչ դատարանը հիմնավորել է, որ հայցվորի հիմնական փաստարկները վերաբերելի են ոչ թե «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին, այլ ՀՀ հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածի կարգավորումներին, որի հիմքով էլ հայցվորի կողմից միասնական հաշվին կատարված վճարումներն ուղղվել են հարկային պարտավորությունների մարմանը: Սույն գործով Կոմիտեի կողմից հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկում և գանձում չի իրականացվել, այլ՝ ընդամենը միասնական հաշվին կատարված վճարումներն ուղղվել են մինչև բանկի սնանկ ճանաչվելն առկա հարկային պարտավորությունների մարմանը՝ ՀՀ հարկային օրենսգրքի հիմքով:

Հատկանշական է այն, որ վերաբերելի իրավական նորմերի համակարգված վերլուծությունից հետևում է, որ միասնական հաշիվը գանձապետարանի կողմից վարվող պետական արտաբյուջետային միջոցների ավանդային ենթահաշիվ է, որին հարկ վճարողների կողմից ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում հարկ վճարողների հարկային պարտավորությունների մարման նպատակով, կատարվում են վճարումներ: Հարկի վճարման հանձնարարականում վճարման նպատակի վերաբերյալ նշում չի կատարվում, իսկ նշում կատարվելու դեպքում այն հարկային մարմնի կողմից հաշվի չի առնվում: Ավելին՝ օրենսդիրը հստակ սահմանել է, որ միասնական հաշվում առկա գումարների հաշվին առաջնահերթ մարվում են արտոնագրային հարկի, սոցիալական վճարի հարկային պարտավորությունները՝ նշված հերթականությամբ: Սույն մասում նշված հարկային պարտավորությունները մարվում են՝ անկախ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների առկայությունից և դրանց առաջացման ժամկետներից: Վերոնշյալ հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց

հետո հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության:

Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը մանրակրկիտ անդրադարձել է բողոքի բոլոր կետերին և, վերլուծելով բողոքաբերի մատնանշած փաստարկներն ու հետազոտելով ներկայացված ապացույցները, գտել է, որ բողոքը ենթակա է բավարարման: Ավելին՝ Վերաքննիչ դատարանը որևէ նոր հիմքով քննություն չի իրականացրել, այլ անդրադարձել է ինչպես հայցի առարկային, Դատարանի վճռի հիմնավորումներին, այնպես էլ վերաքննիչ բողոքի հիմքերին, որոնց համակարգված վերլուծության և կիրառելի իրավական նորմերի մեկնաբանման արդյունքում կայացրել է իրավաչափ դատական ակտ: Հետևաբար ներկայացված վճռաբեկ բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

### **3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ՀՀ տնտեսական դատարանի 19.12.2002 թվականի որոշմամբ «Լենդբանկ» փակ բաժնետիրական ընկերության սնանկության մասին ՀՀ կենտրոնական բանկի դիմումը բավարարվել է, և լուծարային կառավարիչ է նշանակվել Անուշավան Խաչիկյանը (**հատոր 1-ին, գ.թ. 33-34**).

2) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.06.2011 թվականի որոշմամբ «Լենդբանկ» փակ բաժնետիրական ընկերության լուծարվող բանկի լուծարային կառավարիչ Անուշավան Խաչիկյանը 27.06.2011 թվականից ազատվել է կառավարչի պարտականությունների կատարումից, և լուծարվող բանկի լուծարային կառավարիչ է նշանակվել Հարություն Ղազարյանը (**հատոր 1-ին, գ.թ. 47-48**).

3) Թիվ ԵՔԴ/0038/04/08 սնանկության գործով ՀՀ սնանկության դատարանի 21.07.2022 թվականի վճռով Մարտին Սանդոյանի հայցը բավարարվել է՝ վճռվել է «Լենդբանկ» փակ բաժնետիրական ընկերություն լուծարվող բանկի լուծարային կառավարչին պարտավորեցնել Արմեն Խաչատուրի Բադոյանի և Մարտին Ռաֆայելի Սանդոյանի միջև 19.01.2021 թվականին կնքված, Մելիք Ազատի Ավետիսյանի և Մարտին Ռաֆայելի Սանդոյանի միջև 19.01.2021 թվականին կնքված, Պետրոս Հակոբի Մարկոսյանի և Մարտին Ռաֆայելի Սանդոյանի միջև 19.01.2021 թվականին կնքված, Վարդան Սիմոնի Սահակյանի և Մարտին Ռաֆայելի Սանդոյանի միջև 22.01.2021 թվականին կնքված, Ազատուհի Ղուկասի Մանուկյանի և Մարտին Ռաֆայելի Սանդոյանի միջև 22.01.2021 թվականին կնքված, Ռազմելա Յաշայի Հարությունյանի և Մարտին Ռաֆայելի Սադոյանի միջև 20.01.2021 թվականին կնքված պահանջի զիջման պայմանագրերի հիման վրա «Լենդբանկ» փակ բաժնետիրական ընկերություն լուծարվող բանկի պարտատերերի ցանկում կատարել փոփոխություն և Արմեն Խաչատուրի Բադոյանի, Մելիք Ազատի Ավետիսյանի, Պետրոս Հակոբի Մարկոսյանի, Վարդան Սիմոնի Սահակյանի, Ալբերտ Ոսկանի Մանուկյանի ու Ռազմիկ Հրաչիկի Հարությունյանի փոխարեն որպես պարտատեր գրանցել Մարտին Ռաֆայելի Սանդոյանի 14.338.736 ՀՀ դրամի աշխատավարձի գծով պահանջը՝ 19.12.2002 թվականի դրությամբ գործող խմբագրությամբ «Բանկերի և

վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված հերթում: Նույն վճռով բավարարվել է նաև Անդրանիկ Սաղաթելի Հովհաննիսյանի հայցը և վճռվել է «Լենդբանկ» փակ բաժնետիրական ընկերություն լուծարվող բանկի լուծարային կառավարչին պարտավորեցնել «Լենդբանկ» փակ բաժնետիրական ընկերություն լուծարվող բանկի պարտատերերի ցանկում գրանցված Անդրանիկ Սաղաթելի Հովհաննիսյանի 5.508.555 ՀՀ դրամ աշխատավարձի գծով պահանջի հերթը չփոփոխել և այն բավարարել 19.12.2002 թվականի դրությամբ գործող խմբագրությամբ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված հերթում (...)  
**(հատոր 1-ին, գ.թ. 35-46).**

4) Կառավարչի 10.08.2022 թվականի ««Լենդբանկ» ՓԲԸ լուծարվող բանկի լուծարային կառավարիչ Հարություն Ղազարյանի՝ «Լենդբանկ» ՓԲԸ լուծարվող բանկի լուծարային հաշվեկշռում արտացոլված «ա» հերթի վճարման ենթակա աշխատավարձային պարտավորությունների բավարարման մասին» որոշմամբ որոշվել է իրականացնել «Լենդբանկ» ՓԲԸ լուծարվող բանկի լուծարային հաշվեկշռում արտացոլված «ա» հերթի վճարման ենթակա աշխատավարձային պարտավորությունների բավարարումը՝ որոշմամբ նշված պարտատերերին և որոշմամբ սահմանված չափերով, ներառյալ՝ զուտ աշխատավարձի վճարման ենթակա գումարները, ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարները և զինծառայողների ապահովագրության հիմնադրամին վճարման ենթակա դրոշմանիշային վճարի գումարները, որոնք միասին կազմում են 63.731.054 ՀՀ դրամ, որից՝ 48.085.429 ՀՀ դրամը նշվել է որպես պարտատերերին վճարվելիք զուտ աշխատավարձի ընդհանուր գումար, 15.266.625 ՀՀ դրամը նշվել է որպես ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումար, իսկ 379.000 ՀՀ դրամը՝ որպես զինծառայողների ապահովագրության հիմնադրամին վճարման ենթակա ընդհանուր գումար **(հատոր 1-ին, գ.թ. 21-23).**

5) «Կոնվերս բանկ» փակ բաժնետիրական ընկերության 06.09.2022 թվականի թիվ 5, թիվ 6, թիվ 7, թիվ 8, թիվ 9, թիվ 10, թիվ 11 և թիվ 12 վճարման հանձնարարականների համաձայն՝ Կառավարչի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվին է փոխանցվել 7.007.319 ՀՀ դրամ, 2.067.825 ՀՀ դրամ, 1.749.735 ՀՀ դրամ, 366.539 ՀՀ դրամ, 1.552.667 ՀՀ դրամ, 692.536 ՀՀ դրամ, 1.129.644 ՀՀ դրամ և 700.360 ՀՀ դրամ գումար՝ համապատասխանաբար՝ որպես Հարություն Ղազարյանին, Ալեքսանդր Բաղդոյանին, Անդրանիկ Հովհաննիսյանին, Պետրոս Մարկոսյանին, Վարդան Սահակյանին, Ալբերտ Մանուկյանին, Արմեն Բաղդոյանին և Մելիք Ավետիսյանին վճարված աշխատավարձային պարտավորության գծով հաշվարկված եկամտային հարկ **(հատոր 1-ին, գ.թ. 11-18).**

6) Միասնական հաշվից քաղվածքի համաձայն՝ Կառավարչի կողմից վճարված 15.266.625 ՀՀ դրամ գումարն ուղղվել է լուծարվող բանկի՝ ավելացված արժեքի հարկի մասով առկա հարկային պարտավորությունների մարմանը **(անվիճելի փաստ):**

#### **4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

*Վերոգրյալով պայմանավորված՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ բանկերի լուծարային գործընթացում բանկային պարտավորությունների մարման ժամանակ հարկային իրավահարաբերությունների դրսևորման որոշակի առանձնահատկությունների:*

Սնանկության վարույթի առանձնահատկությունները սահմանված են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ նույն օրենքով սահմանված սնանկության վարույթի պարտապան կարող է լինել ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ, բացառությամբ բանկի:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների անվճարունակության (սնանկության) բնագավառի հարաբերությունները կարգավորվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների անվճարունակության (սնանկության) հասկացություններն ու հատկանիշները, անվճարունակության և սնանկության կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացման կարգն ու պայմանները, ինչպես նաև բանկերի սնանկության հետևանքով նրանց լուծարման ընթացակարգը սահմանված են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք):

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանկի սնանկությունը՝ Կենտրոնական բանկի դիմումի հիման վրա դատարանի կողմից հաստատված նրա անվճարունակությունն է: Նման դեպքում բանկը ենթակա է լուծարման՝ նույն օրենքով սահմանված կարգով:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կենտրոնական բանկի դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո դատարանը քննում է գործը եռօրյա ժամկետում: Դատարանը որոշում է կայացնում Կենտրոնական բանկի դիմումը բավարարելու կամ մերժելու մասին: Դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ: Դատարանը մերժում է Կենտրոնական բանկի դիմումը, եթե Կենտրոնական բանկը որոշում է կայացրել նույն օրենքով սահմանված ընթացակարգի խախտումներով: Բանկի սնանկության մասին որոշում կայացնելիս դատարանը նշանակում է նաև լուծարային կառավարիչ՝ Կենտրոնական բանկի կամ պարտատերերի կողմից ներկայացված թեկնածուների թվից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի կողմից Կենտրոնական բանկի դիմումը բավարարելու և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից՝

ա) լուծարային կառավարչին են անցնում բանկի գործերի կառավարման լիազորությունները.

բ) դադարեցվում են բանկի բոլոր տեսակի պարտավորությունների (բացառությամբ նույն օրենքով նախատեսված զուտացման համաձայնությամբ ֆինանսական գործարքներից բխող պարտավորությունների), դիմաց տոկոսների և այլ նմանատիպ հատուցումների, օրենքով կամ պայմանագրով նախատեսված բոլոր տեսակի տուժանքների, տուգանքների, տույժերի, տոկոսների հաշվարկումը և գանձումը, վարձակալական և այլ վճարների, բոլոր տեսակի հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկումն ու գանձումը.

(...):

Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

1. Դատարանի կողմից սնանկ ճանաչված բանկի լուծարման ընթացակարգն սկսում է դատարանը՝ նույն օրենքի 29-րդ հոդվածով սահմանված որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

2. Բանկի կառավարման մարմինները, իսկ նույն օրենքով սահմանված կարգով ադմինիստրացիա նշանակված լինելու դեպքում՝ ադմինիստրացիայի ղեկավարը, պարտավոր է դատարանի կողմից բանկի սնանկության և լուծարային կառավարիչ նշանակելու մասին որոշման կայացման պահից՝ 15-օրյա ժամկետում, լուծարային կառավարչին հանձնել բանկի փաստաթղթերը, նյութական և այլ արժեքները:

3. Լուծարային կառավարիչն իր նշանակումից հետո՝ եռօրյա ժամկետում, մամուլում և զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակում է պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի և վայրի մասին տեղեկություններ: Պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից և գերազանցել վեցամսյա ժամկետը:

4. Լուծարային կառավարիչը նույն հոդվածի 3-րդ կետով սահմանված պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ընթացքում ձեռնարկում է

անհրաժեշտ միջոցառումներ՝ բանկին ի պահ հանձնված գույքը դրա սեփականատերերին վերադարձնելու և այդ կապակցությամբ վերջնական հաշվարկներ կատարելու ուղղությամբ: Լուծարային կառավարիչը ծանուցումներ է ուղարկում գույքի սեփականատերերին՝ նշելով ժամկետը, որի ընթացքում նրանք կարող են պահանջել այդ գույքը: Նշված ժամկետը չի կարող լինել մեկ ամսից ավելի: Լուծարային կառավարչի ծանուցումն ստանալու պահից՝ մեկամսյա ժամկետում, գույքի սեփականատերերը պարտավոր են վերցնել բանկին ի պահ հանձնված գույքը: Եթե սույն կետով սահմանված մեկամսյա ժամկետում գույքի սեփականատերերը չեն դիմում բանկ, ապա լուծարային կառավարիչը գույքը հանձնում է ի պահ՝ օրենքով սահմանված կարգով կնքելով պայմանագիր:

5. Լուծարային կառավարիչը, նույն հոդվածի 3-րդ կետով սահմանված պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ընթացքում, ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ բանկի պարտատերերին հայտնաբերելու և բանկի դեբիտորական պարտքերն ստանալու ուղղությամբ:

6. Լուծարային կառավարիչը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը, որը պարունակում է տեղեկություններ՝

ա) լուծարվող բանկի գույքի կազմի մասին.

բ) պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին, այդ թվում՝ բանկի հաշվեկշռում արտացոլված կամ բանկին ներկայացված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր ավանդատուին, վարկատուին կամ այլ պարտատիրոջը հասանելիք գումարի չափը և սույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված՝ պահանջների բավարարման հերթականությունը, ինչպես նաև իր կողմից մերժված պահանջների առանձին ցանկը.

(...)

8. Լուծարային կառավարիչը պարտատերերի պահանջները բավարարում է նույն օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, միջանկյալ լուծարային հաշվեկշռին համապատասխան՝ սկսած դրա հրապարակման օրվանից:

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին, հետևյալ հերթականությամբ՝

ա) առաջին՝ ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում.

(...)

ե) հինգերորդ՝ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները.

(...):

Օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային կառավարիչը կազմում է լուծարման հաշվեկշիռը և այն հաստատելու դիմումով ներկայացնում է դատարան:

2. Դատարանը 10-օրյա ժամկետում կայացնում է լուծարման հաշվեկշիռը հաստատելու կամ հաստատումը մերժելու մասին որոշում՝ նշելով մերժման հիմքերը (...):

(...)

4. Նույն հոդվածով սահմանված կարգով դատարանի կողմից՝ լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին դատարանի որոշումն ստանալու պահից եռօրյա ժամկետում, Կենտրոնական բանկը լուծարվող բանկը գրանցումից հանելու մասին գրառում է կատարում բանկերի գրանցումների մատյանում, որից հետո բանկը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած: Կենտրոնական բանկն այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին:

Վերոգրյալ իրավադրույթների համադրված վերլուծությունների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բանկերի անվճարունակության հետ կապված հարաբերությունները հանդիսանում են սնանկության առանձին վարույթի կարգավորման առարկա:

Բանկի սնանկ ճանաչումն իրականացվում է դատարանի կողմից բանկի անվճարունակությունը հաստատելու միջոցով, որից բխող անմիջական հետևանքն այդ բանկի լուծարումն է: Բանկի լուծարային գործընթացի ժամանակ դրա իրականացումն ապահովելու նպատակով դատարանի կողմից նշանակվում է բանկի լուծարային կառավարիչ, և այդ պահից վերջինիս են անցնում բանկի գործերի կառավարման լիազորությունները, իսկ բանկի բոլոր տեսակի պարտավորությունների (բացառությամբ՝ օրենքով նախատեսված զուտացման համաձայնությամբ ֆինանսական գործարքներից բխող պարտավորությունների) դիմաց տոկոսների և այլ նմանատիպ հատուցումների, օրենքով կամ պայմանագրով նախատեսված բոլոր տեսակի տուժանքների, տուգանքների, տույժերի, տոկոսների հաշվարկումը և գանձումը, վարձակալական և այլ վճարների, բոլոր տեսակի հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկումն ու գանձումը դադարեցվում է:

Բանկի լուծարային կառավարիչը, ի թիվս այլնի, կազմակերպում է պարտատերերի պահանջների ներկայացման գործընթացը, իսկ պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո կազմում, հաստատում և հրապարակում է լուծարվող բանկի գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի և լուծարման գործընթացի իրականացման համար անհրաժեշտ այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ պարունակող միջանկյալ լուծարային հաշվեկշիռը:

Հարկ է ընդգծել, որ, ինչպես սնանկության ընդհանուր վարույթի, այնպես էլ սույն դեպքում պարտատերերի պահանջների բավարարման համար օրենսդրությամբ սահմանված է հստակ ու որոշակի հերթականություն, ուստի բանկի պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին՝ սահմանված հերթականությամբ համապատասխան:

Գործող իրավակարգավորումների համաձայն՝ բանկի սնանկության վարույթի ընթացքում առաջին՝ «ա» հերթով մարման են ենթակա բանկի այն

պարտավորությունները, որոնք կապված են ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերի հետ, այդ թվում՝ աշխատավարձը՝ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում: Իսկ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ ունեցած բանկի պարտավորությունները մարվում են հինգերորդ՝ «ե» հերթով:

Լուծարման գործընթացի եզրափակման նպատակով պարտատերերի հետ կապված հաշվարկների ավարտից հետո լուծարային կառավարիչը կազմում և դատարան է ներկայացնում լուծարման հաշվեկշիռը, որը դատարանի կողմից հաստատվելու պարագայում լուծարվող բանկը հանվում է գրանցումից և համարվում լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած:

Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ բանկերի սնանկության վարույթը ևս միմյանց հաջորդող և իրարով փոխկապակցված փուլերի համակարգ է, որոնցից յուրաքանչյուրի սահմանումը միտված է կոնկրետ խնդրի կարգավորմանը, իսկ դրանք իրենց ամբողջության մեջ հետապնդում են ընդհանուր նպատակ, այն է՝ պարտատերերի պահանջների բավարարումը՝ ֆինանսական համակարգի կայունության, հանրային վստահության և ավանդատուների շահերի պաշտպանության պահպանմամբ:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ բանկերի սնանկության վարույթի փուլերը գտնվում են սերտ փոխկապակցվածության մեջ, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր փուլին տրամաբանորեն հաջորդում է մյուս փուլը, ուստի կոնկրետ փուլի առջև դրված խնդրի պատշաճ քննությամբ ու լուծմամբ է պայմանավորված ողջ սնանկության վարույթի արդյունավետ ու նպատակային իրականացումը:

Սույն գործի ամբողջական քննության իրականացման նպատակով Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգրք) որոշ իրավակարգավորումների.

Այսպես, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի կիրառության իմաստով՝ ստորև նշված հասկացություններն ունեն հետևյալ իմաստն ու նշանակությունը.

1) **հարկ**՝ պետական և (կամ) հասարակական կարիքների բավարարման նպատակով Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ վճարվող պարտադիր և անհատույց գումար, որը վճարվում է հարկ վճարողների կողմից՝ Օրենսգրքով սահմանված կարգով, չափերով և ժամկետներում.

(...)

8) **միասնական հաշիվ**՝ Օրենսգրքով սահմանված դեպքերում հարկ վճարողների հարկային պարտավորությունների մարման նպատակով գանձապետարանի կողմից վարվող պետական արտաբյուջետային միջոցների ավանդային ենթահաշիվ.

(...)

10) **միասնական հաշվի գումար**՝ գումար, որով Օրենսգրքով սահմանված կարգով կարող են մարվել հարկ վճարողի հարկային պարտավորությունները, որը կարող է առաջանալ՝

ա. միասնական հաշվին կատարված վճարումից

(...):

Օրենսգրքի 18-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

4. Հարկի (այդ թվում՝ կանխավճարի), տույժի և (կամ) տուգանքի վճարումը համարվում է կատարված վճարողին սպասարկող բանկի վճարման հանձնարարականի հիման վրա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից միասնական գանձապետական հաշվին գումարի հաշվեգրման օրը:

5. Միասնական հաշվի միջոցով մարվող հարկային պարտավորությունների մարման նպատակով՝

1) հարկ վճարողները հարկի վճարումը կատարում են միասնական հաշվին.

2) հարկի վճարման հանձնարարականում վճարման նպատակի վերաբերյալ նշում չի կատարվում, իսկ նշում կատարվելու դեպքում այն հարկային մարմնի կողմից հաշվի չի առնվում:

Օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրող)՝ Օրենսգրքի 58-րդ գլխով սահմանված կարգով հարկային մարմնում որպես հարկ վճարող հաշվառված կազմակերպությունն է, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը, որի վրա, Օրենսգրքի համաձայն, դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ բնամթերային ձևով տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը կամ վճարները հաշվարկելու, պահելու (գանձելու) և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու պարտավորությունը (...):

Օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկը Օրենսգրքի 141-րդ հոդվածով սահմանված հարկման օբյեկտի համար Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում պետական բյուջե վճարվող պետական հարկ է:

Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների:

Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նույն բաժնի կիրառության իմաստով՝ եկամտային հարկով հարկման օբյեկտի հաշվառումն իրականացվում է (հարկի հաշվարկը կատարվում է)՝ հաշվարկման ենթակա աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների, ինչպես նաև Օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված եկամուտների մասով՝ հաշվառման հաշվեգրման մեթոդով:

Օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ֆիզիկական անձանց եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկում և պահում է հարկային գործակալը՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերը, եթե Օրենսգրքի 153-րդ հոդվածով այլ բան սահմանված չէ:

Օրենսգրքի 325-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ միասնական հաշվում առկա գումարների հաշվին առաջնահերթ մարվում են արտոնագրային հարկի, սոցիալական

վճարի հարկային պարտավորությունները՝ նշված հերթականությամբ: Նույն մասում նշված հարկային պարտավորությունները մարվում են՝ անկախ հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունների առկայությունից և դրանց առաջացման ժամկետներից:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 5-րդ մասում նշված հարկային պարտավորությունների բացակայության կամ դրանք մարվելուց հետո հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության: Ընդ որում, այլ հարկային պարտավորությունների գումարներից սկզբում մարվում են բոլոր հարկերի, վճարների գումարները, այնուհետև՝ տույժերի, որից հետո տուգանքների, վնասի հատուցման գումարները, իսկ հարկերի մարումները կատարելիս առաջնահերթորեն մարվում են նույն օրը ներկայացված հարկային հաշվարկներով ձևավորված այն հարկերի գծով պարտավորությունները, որոնց կատարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետն ավելի շուտ է լրանում:

Վերոգրյալ իրավանորմերի համադրված վերլուծությունից հետևում է, որ հարկ վճարող սուբյեկտները հարկային պարտավորությունների մարման նպատակով անհրաժեշտ վճարումները փոխանցում են գանձապետարանի կողմից վարվող միասնական հաշվին: Հարկային օրենսդրությամբ սահմանված է հարկերի մարման հերթականություն, ուստի հարկային պարտավորությունների գումարները միասնական հաշվին մուտք լինելուց հետո մարումները կատարվում են այդ հերթականությանը համապատասխան, իսկ հարկի վճարման հանձնարարականում վճարման նպատակի վերաբերյալ նշումներ կատարված լինելու պարագայում հարկային մարմնի կողմից դրանք հաշվի չեն առնվում:

Հարկային օրենսդրությամբ սահմանված հարկատեսակներից է եկամտային հարկը, որը վճարելու պարտականությունը ծագում է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց մոտ, ի թիվս այլնի, Օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համախառն եկամտի առկայության դեպքում: Ֆիզիկական անձանց եկամուտների մասով եկամտային հարկը ՀՀ պետական բյուջե վճարելու պարտականությունը դրված է հարկային գործակալի վրա: Վերջինս եկամտային հարկ հաշվարկելու և վճարելու պարտականություն է ստանձնում նաև աշխատավարձի (դրան հավասարեցված այլ վճարումների) վճարման պարագայում, այսինքն՝ աշխատավարձի (դրան հավասարեցված այլ վճարումների) և եկամտային հարկի վճարումը փոխկապակցված գործընթացներ են, և եկամտի վճարման կատարումը անմիջականորեն առաջ է բերում եկամտային հարկ վճարելու պարտականություն:

Սնանկ ճանաչված և լուծարման գործընթացում գտնվող բանկի պարտավորությունների մարման հերթականության վերաբերյալ վերոգրյալ հատուկ կանոնների հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ սնանկ ճանաչված և լուծարման գործընթացում գտնվող բանկի պարտավորությունների մարման գործընթացում սուբյեկտների միջև հարկային իրավահարաբերությունների ծագման հարցին:

Վերը նշված իրավակարգավորումների հիման վրա՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկային հարաբերությունները, այդ թվում՝ հարկերի հաշվարկման, վճարման և գանձման կանոնները կարգավորված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Ըստ գործող իրավակարգավորումների՝ հարկային իրավահարաբերություններն առաջանում են որոշակի նախադրյալների առկայության պարագայում՝ հետևյալ գործողությունների իրականացման շուրջ՝

- հարկ վճարողների հաշվառում և սպասարկում,
- հարկերի ու վճարների սահմանում, հաշվարկում, վճարում և վերադարձ,
- հարկային պարտավորությունների հաշվառում և գանձում,
- հարկային արտոնությունների սահմանում,
- հարկ վճարողների, հարկային և լիազոր մարմինների լիազորությունների ու պարտականությունների ամրագրում,
- հարկային հսկողության իրականացում,
- օրենսդրության խախտման համար պատասխանատվության միջոցների կիրառում,
- հարկային պարտավորությունների կատարման ապահովում,
- հարկային վեճերի լուծում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միայն հարկային օրենսդրությամբ սահմանված նպատակների իրականացմանն ուղղված վերը նշված գործողությունների իրականացմամբ առաջացող հարաբերությունը կարող է որակվել որպես հարկային և առաջացնել դրանից բխող բոլոր իրավաբանական հետևանքները:

Անդրադառնալով հարկերի հաշվարկման և վճարման, ինչպես նաև հարկային պարտավորությունների գանձման գործընթացներին՝ հարկ է արձանագրել, որ այդ գործընթացների շրջանակներում հարկային հարաբերությունները ծագում են հակադիր շահեր ունեցող երկու սուբյեկտների՝ մի կողմից պետության՝ ի դեմս հարկային մարմնի, և մյուս կողմից տվյալ հարկատեսակը վճարելու պարտականություն ունեցող սուբյեկտի՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձի միջև: Օրենսդրությամբ նախատեսված հարկման օբյեկտ ձեռքբերելիս և դրա հիմքով առաջացող հարկային պարտավորության մարման համար նախատեսված գումարը պետական բյուջե վճարելիս (ուղղակի կամ միջնորդավորված ձևով) հարկ վճարելու պարտականություն ունեցող անձը, որպես հարկային իրավունքի մասնավոր սուբյեկտ, օրենքի ուժով իրավահարաբերության մեջ է մտնում հարկային իրավունքի հանրային սուբյեկտի՝ պետության հետ՝ հանդես գալով որպես այդ իրավահարաբերությունների անմիջական, ուղղակի մասնակից: Միաժամանակ, հարկային օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշակի դեպքերում, հարկեր հաշվարկելու, վճարելու և այն պետական բյուջե փոխանցելու պարտականությունը դրված է միջնորդող սուբյեկտների՝ հարկային գործակալների վրա, որոնք այդ պարտականության կատարման ժամանակ հանդես են գալիս որպես հարկային իրավահարաբերության անուղղակի մասնակիցներ:

Զուգահեռաբար, անդրադառնալով հարկային պարտավորությունների մարման կարգավորումներին՝ հարկ է նշել, որ հարկային օրենսդրական կարգավորման շրջանակներում հարկային պարտավորությունների մարման նպատակով միասնական հաշվին մուտք եղած վճարներից հարկերի մարումը կատարվում է Օրենսգրքով նախանշված հերթականության պահպանմամբ, որի պայմաններում միասնական հաշվին առկա գումարներից առաջնահերթության կարգով մարվում են արտոնագրային հարկի և սոցիալական վճարի հարկային պարտավորությունները, իսկ դրանց բացակայության

դեպքում կամ դրանք մարվելուց հետո հարկ վճարողի այլ հարկային պարտավորությունները մարվում են ըստ ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության հերթականության:

Ի տարբերություն հարկային օրենսդրության՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի կարգավորմամբ սնանկ ճանաչված և լուծարման գործընթացում գտնվող բանկի լուծարային կառավարչի նշանակման պահից դադարեցվում են բանկի բոլոր տեսակի պարտավորությունները, այդ թվում՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկումն ու գանձումը, իսկ բանկի պարտատերերի պահանջների բավարարումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված որոշակի հերթականությամբ, որի շրջանակում առաջնային կարգով մարվում են բանկի ադմինիստրացիայի և լուծարային կառավարչի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերի, այդ թվում՝ աշխատավարձի մասով առկա պարտավորությունները, իսկ պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ ունեցած բանկի պարտավորությունները, այդ թվում՝ հարկերը, մարվում են հինգերորդ՝ «ե» հերթով:

Քննարկման առարկա դարձնելով լուծարային կառավարչի կողմից պարտատերերի պահանջների բավարարման նպատակով բանկի առաջին հերթի պարտավորությունների կատարման գործընթացը՝ հարկ է արձանագրել, որ աշխատավարձի մասով առկա պարտավորությունը գտնվում է առաջին հերթում կատարման ենթակա պարտավորությունների շարքում: Յուրաքանչյուր դեպքում աշխատավարձի վճարմամբ տեղի է ունենում եկամտի հատկացում դրա սեփականատիրոջը, և այդ վճարման փաստի ուժով աշխատավարձ ստացած անձի մոտ, որպես հարկ վճարելու պարտականություն ունեցող սուբյեկտի, ծագում է եկամտային հարկի մասով պետական բյուջե վճարում կատարելու պարտականություն: Իսկ աշխատավարձի մասով առկա բանկային պարտավորությունը մարելու պարագայում լուծարային կառավարչի մոտ, որպես հարկային գործակալի (տվյալ դեպքում սնանկ ճանաչված բանկի) ներկայացուցիչ, ծագում է վճարված աշխատավարձի մասով եկամտային հարկ հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտականություն: Այլ կերպ ասած՝ լուծարային կառավարչի կողմից պարտատերերի պահանջների բավարարման նպատակով բանկի առաջին հերթի պարտավորություններից աշխատավարձը և դրա մասով հաշվարկված եկամտային հարկը վճարելու գործընթացում հարկային իրավահարաբերությունները ծագում են մի կողմից աշխատավարձը ստացող անձի՝ որպես եկամտային հարկ վճարելու պարտականություն ունեցող հարկային իրավունքի մասնավոր՝ ուղղակի սուբյեկտի, և մյուս կողմից պետության՝ որպես հարկային իրավունքի հանրային սուբյեկտի միջև, իսկ հարկային գործակալը՝ սնանկ ճանաչված բանկը՝ ի դեմս լուծարային կառավարչի, սույն իրավահարաբերություններում հանդես է գալիս միջնորդող սուբյեկտի կարգավիճակով՝ կատարելով հաշվարկված եկամտային հարկի գումարը պետական բյուջե մուտքագրելու օրենսդրությամբ իր վրա դրված ուղղակի պարտականությունը: Նշվածն իր հերթին նշանակում է, որ այդ գործընթացում բանկը հանդես չի գալիս որպես հարկ վճարելու պարտականություն ունեցող սուբյեկտ և այդ կարգավիճակով պետության հետ չի մտնում

հարկային իրավահարաբերությունների մեջ, ուստի լուծարային կառավարչի կողմից բանկի առաջին հերթի պարտավորություններից աշխատավարձի մասով հաշվարկված և պետական բյուջե փոխանցված եկամտային հարկի գումարը չի կարող ուղղվել բանկի՝ որպես հարկ վճարելու պարտականություն ունեցող սուբյեկտի, պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ ունեցած բանկային պարտավորությունների, այդ թվում՝ հարկերի մարմանը: Ըստ այդմ, լուծարային կառավարչի կողմից պարտատերերի պահանջների բավարարման նպատակով բանկի պարտավորությունների մարման հերթականությունը որոշելիս պետք է առաջնորդվել «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով, քանի որ այդ իրավահարաբերությունների նկատմամբ ՀՀ հարկային օրենսգրքի նորմերը կիրառելի չեն:

Զուգահեռաբար Վճռաբեկ դատարանը հարկ է համարում նշել, որ բանկերի լուծարային գործընթացում բանկային պարտավորությունների մարման ժամանակ բանկի՝ որպես հարկ վճարելու պարտականություն ունեցող սուբյեկտի և պետության միջև մինչև բանկի սնանկ ճանաչվելու պահը ծագած պարտավորություններով վճարում կատարելու հարկային իրավահարաբերություններ կարող են առաջանալ, երբ լուծարային կառավարչի կողմից մարվեն Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետով հինգերորդ հերթում նշված պետական բյուջեի նկատմամբ բանկի հարկային պարտավորությունները:

Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը վերստին արձանագրում է, որ բանկերի անվճարունակության հետ կապված հարաբերությունները հանդիսանում են սնանկության առանձին վարույթի կարգավորման առարկա: Եվ հաշվի առնելով, որ Օրենքի դրույթները սահմանված են բանկերի սնանկության և լուծարման և դրանց իրավական հետևանքների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Օրենքը հանդիսանում է լուծարային գործընթացում գտնվելու ժամանակ բանկերի պարտավորությունները, այդ թվում՝ հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները մարելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող հատուկ օրենք, ուստի լուծարային գործընթացում գտնվող բանկի հարկային պարտականությունների մարման ժամանակ Օրենսգրքի իրավակարգավորումները կիրառելի չեն, որպիսի պայմաններում պետք է առաջնորդվել Օրենքի դրույթներով՝ բանկի պարտավորությունների մարումը իրականացնելով Օրենքով սահմանված հերթականությամբ:

***Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.***

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործը հարուցվել է Կառավարչի կողմից ներկայացված գործողության կատարման հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է պարտավորեցնել Կոմիտեին իր կողմից 07.10.2022 թվականին փոխանցված գումարները, այն է՝ «ա» հերթի աշխատավարձային պահանջների բավարարման արդյունքում լուծարվող բանկի՝ որպես հարկային գործակալի եկամտային հարկի գծով հաշվարկված և հարկ վճարողի միասնական հաշվին փոխանցված

հանրագումարային 15.266.625 ՀՀ դրամը, ձևակերպել որպես եկամտային հարկի վճարներ՝ ըստ թվարկված ֆիզիկական անձանց և գումարների:

**Դատարանը** 16.06.2023 թվականի վճռով հայցը բավարարել է՝ պատճառաբանելով, որ «(...) Բանկի լուծարային ընթացակարգի ժամանակ դադարեցված են եղել բանկի բոլոր տեսակի պարտավորությունները, այդ թվում՝ բոլոր տեսակի հարկերի, փուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկումն ու գանձումը, իսկ եկամտային հարկը գոյացել է և հաշվարկվել առաջին՝ լուծարային կառավարչի կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ վճարելու շրջանակներում: Այսինքն՝ Պատասխանողը Բանկի լուծարային ընթացակարգի ժամանակ բանկի բոլոր տեսակի պարտավորությունների դադարեցված լինելու պայմաններում չէր կարող Հայցվորի միասնական հաշվի գումարները ուղղեր ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության մարմանը, և քանի որ Հայցվորը օգտվելով «Բանկերի, կարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով իրեն տրված լիազորություններից և սնանկության գործընթացում օրենքով սահմանված պարտավորությունների կատարման հերթականությանը համապատասխան իրականացրել է լուծարվող բանկի ա/ հերթի աշխատավարձային պարտավորությունների մարում, որոնց մաս են կազմում նաև աշխատակիցներին վճարված աշխատավարձից հաշվարկված եկամտային հարկը և դրոշմանիշային վճարները:

Միաժամանակ Դատարանն արձանագրում է, որ Պատասխանողի կողմից միասնական հաշվին կատարված վճարումները ուղղվել են հարկային պարտավորությունների մարմանը՝ ՀՀ հարկային օրենսգրքի 325-րդ հոդվածի համաձայն, մինչդեռ Հայաստանի Հանրապետության փարածքում գործող բանկերի սնանկության հետևանքով նրանց լուծարման ընթացակարգը սահմանվում են «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին», «Բանկերի, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին», «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով ինչպես նաև այլ օրենքներով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում և սահմաններում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով»:

**Վերաքննիչ դատարանը** 02.05.2025 թվականի որոշմամբ ամբողջությամբ բավարարել է Կոմիտեի վերաքննիչ բողոքը՝ Դատարանի 16.06.2023 թվականի վճիռն ամբողջությամբ բեկանել և փոփոխել է՝ հայցը մերժել է: Վերաքննիչ դատարանը մասնավորապես արձանագրել է հետևյալը. «(...) ըստ սահմանված հարկային պարտավորությունների մարման կարգի, միասնական հաշվին կատարված վճարումների մարումներն պետք է ուղղվեին ըստ մարման օրվա դրությամբ առկա և ավելի վաղ վճարման վերջնաժամկետ ունեցող հարկային պարտավորությունների մարմանը՝ չնայած, որ վճարողի կողմից նշվել է վճարման այլ նպատակ, ինչը սույն դեպքում տեղի է ունեցել: Իր հերթին, հարկային մարմնի հայեցողությամբ միասնական հաշվին առկա գումարներն

այլ պարտավորությունների մարմանն ուղղելն ինքնին կհակասեր օրենսդրական կարգավորումներին: Այս կապակցությամբ պետք է շեշտադրել նաև, որ ՀՀ հարկային օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով հարկի վճարման հանձնարարականում վճարման նպատակի վերաբերյալ նշում չի կատարվում, իսկ նշում կատարվելու դեպքում այն հարկային մարմնի կողմից հաշվի չի առնվում:

Ինչ վերաբերում է մոտեցմանն այն մասին, որ պատասխանողը բանկի լուծարային ընթացակարգի ժամանակ բանկի բոլոր տեսակի պարտավորությունների դադարեցված լինելու պայմաններում չէր կարող հայցվորի միասնական հաշվի գումարներն ուղղեր ավելի վաղ առաջացած հարկային պարտավորության մարմանը, և քանի որ հայցվորն օգտվել է «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով իրեն տրված լիազորություններից, և սնանկության գործընթացում օրենքով սահմանված պարտավորությունների կատարման հերթականությանը համապատասխան իրականացրել է լուծարվող բանկի ա/ հերթի աշխատավարձային պարտավորությունների մարում, որոնց մաս են կազմում նաև աշխատակիցներին վճարված աշխատավարձից հաշվարկված եկամտային հարկը և դրոշմանիշային վճարները, ապա Վերաքննիչ դատարանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև սնանկության վարույթի ավարտն ընկած ժամանակահատվածում գործում է մորատորիում (պարտատերերի պահանջների բավարարման սառեցում), որի դեպքում պահանջները բավարարվում են ըստ օրենքով սահմանված հերթականության, իսկ ֆինանսական առողջացման ծրագրի հաստատումից հետո պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունների կատարումն իրականացվում է այդ ծրագրով սահմանված կարգով: Ըստ այդմ, բանկի լուծարային կառավարիչը պարտավոր է կազմակերպել իր գործունեությունը սահմանված կարգավորումների հետ համահունչ՝ հիմք ընդունելով պարտավորությունների մարման սահմանված հերթականությունը և նկատի ունենալով նաև մորատորիումը՝ պարտատերերի պահանջների բավարարման սառեցում, ինչը, սակայն, սույն դեպքում տեղի չի ունեցել:

Ավելին, հայցվորի հիմնական փաստարկները և Դատարանի բողոքարկված դատական ակտում ներկայացված վերլուծությունը՝ համապատասխան իրավական նորմերի վկայակոչմամբ, վերաբերում է սույն գործով քննարկման առարկա չհանդիսացող հարցին, այն է՝ պահանջների բավարարման հերթականության խախտմանը, մինչդեռ, սույն դեպքում հարցը քննարկվում է հատկապես Օրենսգրքի 325-րդ հոդվածի կիրառման տիրույթում, որը վերաբերում է արդեն իսկ հայցվորի կողմից միասնական հաշվին վճարված հարկային պարտավորությունների մարման հերթականությանը, որով էլ առաջնորդվել է պատասխանող վարչական մարմինը»:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունների հիմնավորվածությանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Լենդբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը ՀՀ տնտեսական դատարանի 19.12.2002 թվականի վճռով ճանաչվել է սնանկ, որից հետո բանկի նկատմամբ սկսվել է լուծարման գործընթաց:

«Լենդբանկ» փակ բաժնետիրական ընկերություն լուծարվող բանկի թիվ ԵԲԴ/0038/04/08 սնանկության գործով ՀՀ սնանկության դատարանի 21.07.2022 թվականի դատական ակտով վճռվել է բանկի պարտատերերի ցանկում կատարել փոփոխություն և Արմեն Խաչատուրի Բաղդյանի, Մելիք Ազատի Ավետիսյանի, Պետրոս Հակոբի Մարկոսյանի, Վարդան Սիմոնի Սահակյանի, Ալբերտ Ոսկանի Մանուկյանի ու Ռազմիկ Հրաչիկի Հարությունյանի փոխարեն որպես պարտատեր գրանցել Մարտին Ռաֆայելի Սանդոյանի 14.338.736 ՀՀ դրամի աշխատավարձի գծով պահանջը՝ 19.12.2002 թվականի դրությամբ գործող խմբագրությամբ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված հերթում, ինչպես նաև վճռվել է բանկի պարտատերերի ցանկում գրանցված Անդրանիկ Սաղաթելի Հովհաննիսյանի 5.508.555 ՀՀ դրամ աշխատավարձի գծով պահանջի հերթը չփոփոխել և այն բավարարել կրկին 19.12.2002 թվականի դրությամբ գործող խմբագրությամբ «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով սահմանված հերթում:

ՀՀ սնանկության դատարանի 21.07.2022 թվականի վճռի պահանջների կատարման գործընթացում «Լենդբանկ» ՓԲԸ լուծարվող բանկի լուծարային կառավարիչ նշանակված Հարություն Ղազարյանի կողմից 10.08.2022 թվականին կայացված որոշմամբ արձանագրվել է, որ բանկի «ա» հերթի պարտատերերին լուծարվող բանկի լուծարային միջոցներից վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 63.731.054 ՀՀ դրամ, որից՝ 48.085.429 ՀՀ դրամը նշվել է որպես պարտատերերին վճարվելիք զուտ աշխատավարձի ընդհանուր գումար, 15.266.625 ՀՀ դրամը նշվել է որպես ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի ընդհանուր գումար, իսկ 379.000 ՀՀ դրամը՝ որպես զինծառայողների ապահովագրության հիմնադրամին վճարման ենթակա ընդհանուր գումար:

Նշված որոշման կատարումն ապահովելու նպատակով Կառավարչի կողմից բանկի լուծարային միջոցներից ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվին է փոխանցվել 7.007.319 ՀՀ դրամ, 2.067.825 ՀՀ դրամ, 1.749.735 ՀՀ դրամ, 366.539 ՀՀ դրամ, 1.552.667 ՀՀ դրամ, 692.536 ՀՀ դրամ, 1.129.644 ՀՀ դրամ և 700.360 ՀՀ դրամ գումար՝ համապատասխանաբար՝ որպես Ղազարյան Հարությունին, Բաղդյան Ալեքսանդրին, Հովհաննիսյան Անդրանիկին, Մարկոսյան Պետրոսին, Սահակյան Վարդանին, Մանուկյան Ալբերտին, Բաղդյան Արմենին և Ավետիսյան Մելիքին վճարված աշխատավարձերի մասով հաշվարկված եկամտային հարկի վճար:

Վճարված 15.266.625 ՀՀ դրամ գումարը Կոմիտեի կողմից ուղղվել է լուծարվող բանկի՝ ավելացված արժեքի հարկի մասով առկա հարկային պարտավորությունների մարմանը:

Վճռաբեկ դատարանը, սույն գործի նկատմամբ կիրառելով վերն արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրում է, որ սույն դեպքում Կառավարիչը բանկի պարտատերերի պահանջների բավարարումն իրականացնելիս իրավաչափորեն հիմք է ընդունել Օրենքի կարգավորումները և պարտատարերի պահանջների բավարարման հերթականությունն ընտրելիս առաջնորդվել է Օրենքով նախատեսված հատուկ կանոններով: Մասնավորապես, 10.08.2022 թվականի որոշմամբ արձանագրված աշխատավարձի մասով առկա բանկային պարտավորության գումարի վճարմամբ Կառավարչի մոտ, որպես հարկային գործակալ, ծագել է վճարված աշխատավարձի մասով եկամտային հարկ հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտականություն: Արդյունքում, «ա» հերթում նշված բանկի պարտավորությունների մարումն ավարտելու նպատակով Կառավարիչը հաշվարկել և ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի հաշվին է փոխանցվել 7.007.319 ՀՀ դրամ, 2.067.825 ՀՀ դրամ, 1.749.735 ՀՀ դրամ, 366.539 ՀՀ դրամ, 1.552.667 ՀՀ դրամ, 692.536 ՀՀ դրամ, 1.129.644 ՀՀ դրամ և 700.360 ՀՀ դրամ գումար՝ որպես համապատասխանաբար՝ Ղազարյան Հարությունին, Բաղիրյան Ալեքսանդրին, Հովհաննիսյան Անդրանիկին, Մարկոսյան Պետրոսին, Սահակյան Վարդանին, Մանուկյան Ալբերտին, Բաղդյան Արմենին և Ավետիսյան Մելիքին վճարված աշխատավարձերի մասով հաշվարկված եկամտային հարկի վճար:

Այսինքն՝ Կառավարիչը, հանդես գալով որպես հարկային գործակալի՝ բանկի ներկայացուցիչ, իրականացրել է հաշվարկված եկամտային հարկի գումարը պետական բյուջե մուտքագրելու օրենսդրությամբ իր վրա դրված ուղղակի պարտականությունը, վերջինիս կողմից եկամտային հարկի գծով հաշվարկված և հարկ վճարողի միասնական հաշվին փոխանցված հանրագումարային 15.266.625 ՀՀ դրամ գումարը ներառված է եղել միջանկյալ լուծարային հաշվեկշռում, իսկ լուծարային հաշվեկշռի կազմումն ունի հատուկ նպատակ, այն է՝ բանկի պարտատերերի պահանջների կատարման ապահովումը, որը պատասխանող վարչական մարմնի ոչ իրավաչափ գործողության արդյունքում մնացել է անավարտ:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սնանկ ճանաչված և լուծարման գործընթացում գտնվող բանկի լուծարային կառավարչի նշանակման պահից դադարեցվում են բանկի բոլոր տեսակի պարտավորությունները, այդ թվում՝ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների հաշվարկումն ու գանձումը: Նշվածից հետևում է, որ 19.12.2002 թվականից սկսած բանկի բոլոր տեսակի պարտավորությունները, այդ թվում՝ հարկային պարտավորություններն օրենքի ուժով դադարեցված են եղել, ուստի Կոմիտեն չէր կարող Կառավարչի կողմից միասնական հաշվին փոխանցված 15.266.625 ՀՀ դրամ գումարն ուղղել լուծարվող բանկի՝ ավելացված արժեքի հարկի մասով առկա հարկային պարտավորությունների մարմանը:

Ավելին՝ Կառավարչի կողմից եկամտային հարկի գծով հաշվարկված և հարկ վճարողի միասնական հաշվին փոխանցված հանրագումարային 15.266.625 ՀՀ դրամ գումարը ներառված է եղել միջանկյալ լուծարային հաշվեկշռում, իսկ բանկի պարտատերերի պահանջների կատարումն ապահովելու հատուկ նպատակով ստեղծված հաշվեկշռից

փոխանցված գումարը չէր կարող ուղղվել այլ նպատակի, այն է՝ բանկի ունեցած հարկային պարտավորությունների մարմանը:

Անդրադառնալով բանկի՝ մինչև սնանկ ճանաչվելու պահը ծագած հարկային պարտավորությունները մարելու հանգամանքին՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բանկի՝ որպես հարկ վճարելու պարտականություն ունեցող սուբյեկտի հարկային պարտավորությունները մարման են ենթակա Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի «ե» կետով նշված հինգերորդ հերթում, որի նպատակով Կոմիտեն, որպես բանկի պարտատեր, պետք է սահմանված ժամկետում ներկայացնէր իր պահանջները և գրանցեր դրանք, և նախորդ հերթի պահանջների բավարարումից հետո ձեռնակեր իր պահանջների բավարարմանն ուղղված քայլեր, որը, սակայն, չի կատարել:

Այսպիսով, Կառավարչի կողմից պարտատերերի պահանջների բավարարման նպատակով «Լենդբանկ» փակ բաժնետիրական ընկերություն լուծարվող բանկի պարտավորությունները մարման են ենթակա եղել Օրենքով սահմանված հերթականությամբ, և Կառավարչի կողմից 07.10.2022 թվականին փոխանցված գումարները, այն է՝ «ա» հերթի աշխատավարձային պահանջների բավարարման արդյունքում լուծարվող բանկի՝ որպես հարկային գործակալի եկամտային հարկի գծով հաշվարկված և հարկ վճարողի միասնական հաշվին փոխանցված հանրագումարային 15.266.625 ՀՀ դրամը ենթակա է եղել ձևակերպման որպես եկամտային հարկի վճար: Այնինչ Կոմիտեն, սույն վեճի նկատմամբ կիրառելի համարելով ՀՀ հարկային օրենսգրքի նորմերը և Կառավարչի կողմից միասնական հաշվին փոխանցված 15.266.625 ՀՀ դրամ գումարն ուղղելով լուծարվող բանկի՝ ավելացված արժեքի հարկի մասով առկա հարկային պարտավորությունների մարմանը, իրականացրել է ոչ իրավաչափ վարչարարություն՝ խախտելով գրանցված պարտատերերի իրավունքներն ու օրինական շահերը, խոչընդոտելով սնանկության վարույթի արդյունավետ ու նպատակային իրականացմանը, ինչպես նաև զրկելով Կառավարչին լուծարման գործընթացը եզրափակելու հնարավորությունից, որպիսի հանգամանքն անտեսվել է Վերաքննիչ դատարանի կողմից:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը, բեկանելով Դատարանի վճիռը և մերժելով հայցը, կայացրել է ոչ իրավաչափ դատական ակտ:

Ամփոփելով վերոգրյալ իրավական և փաստական վերլուծությունները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը բավարար է Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու համար:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ

դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

### **5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.**

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝ գործի քննության հետ կապված այլ ծախսերն են, ի թիվս այլնի, նաև դատավարության մասնակիցների ներկայացուցիչների վճարները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ դատարաններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝ ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարը և լուծարային կառավարիչը՝ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրենց խնդիրներն իրագործելու նպատակով ներկայացվող հայցերով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված անձինք տուրքի վճարումից ազատվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի՝ իրավահարաբերության ծագման պահին գործող խմբագրությամբ 22-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի ուժով Կառավարիչն ազատված է դատարաններում պետական տուրքի վճարման պարտականությունից:

Հաշվի առնելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ Կառավարչի կողմից վճռաբեկ բողոք ներկայացնելու համար նախապես վճարվել է 30.000 ՀՀ դրամ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի 30.000 ՀՀ դրամ գումարը, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի հիմքով, ենթակա է վերադարձման Կառավարչին:

Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատարանում հայցադիմումի համար նախապես վճարված պետական տուրքի գումարին, ապա Վճռաբեկ դատարանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական տուրքի վճարումից ազատված լինելու պայմաններում Կառավարչի կողմից հայցադիմում ներկայացնելու համար նախապես վճարվել է 10.000 ՀՀ դրամ գումար, գտնում է, որ այդ գումարը ևս ենթակա է վերադարձման Կառավարչին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 02.05.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 16.06.2023 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

*Նախագահող* \_\_\_\_\_ **Հ. ԲԵԴԵՎՅԱՆ**

*Զեկուցող* \_\_\_\_\_ **Ռ. ՀԱԿՈՐՅԱՆ**

\_\_\_\_\_ **Ա. ԹՈՎԱՍՅԱՆ**

\_\_\_\_\_ **Լ. ՀԱԿՈՐՅԱՆ**

\_\_\_\_\_ **Ք. ՄԿՈՅԱՆ**